

Կոռուպցիայի ընկալման 2018թ. համաթիվը ցույց է տալիս, որ աշխարհի երկրների մեծ մասում հակակոռուպցիոն ջանքեր չեն գործադրվում

Վերլուծությունը բացահայտում է, որ կոռուպցիան նպաստում է ժողովրդավարության համաշխարհային ճգնաժամին

Քեռլին, 29 հունվարի, 2019թ. - Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՅ) 2018թ. տվյալները, որոնք այսօր հրապարակվեցին Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից, ցույց են տալիս, որ կոռուպցիան վերահսկելի մակարդակներում պահելու ուղղությամբ աշխարհի երկրների մեծ մասի շարունակական տապալումն իր ներդրումն է ունենում ժողովրդավարության համաշխարհային ճգնաժամի մեջ:

«Աշխարհով մեկ ժողովրդավարական շատ հաստատությունների՝ հաճախ ավտորիտար կամ ամբոխավար հակումներ ունեցող առաջնորդների կողմից վտանգված լինելու պայմաններում մենք պետք է ավելին անենք՝ ուժեղացնելու զսպումների և հակակշիռների մեխանիզմները և պաշտպանենք քաղաքացիների իրավունքները: Կոռուպցիան «մաշեցնում» է ժողովրդավարությունը՝ ծնելով մի արատավոր շրջան, որում կոռուպցիան քայքայում է ժողովրդավարական հաստատությունները և այդ քայքայված, թուլացած հաստատություններն էլ, իրենց հերթին, ավելի քիչ են ունակ՝ պահելու կոռուպցիան վերահսկելի մակարդակների վրա»,- նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն տիկին Պատրիսիա Մորեյրան:

ԿԸՅ 2018թ. տվյալները հիմնված են աշխարհի 180 երկրներում և տարածքներում անցկացված 13 ուսումնասիրությունների և փորձագիտական գնահատումների վրա, որոնք չափում են հանրային ոլորտում կոռուպցիան՝ տալով յուրաքանչյուր երկրին ԿԸՅ արժեք 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր), սանդղակի վրա:

ԿԸՅ մի քանի կարևոր տվյալներ

Աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸՅ արժեքները 50-ից ցածր են, իսկ նրա համաշխարհային միջինը հավասար է 43-ի: Սկսած 2012 թվականից, միայն 20 երկիր է եականորեն բարելավել ԿԸՅ իր արժեքը, ներառյալ՝ **Արգենտինան** և **Կոտ Դ'Իվուարը**, իսկ 16 երկրների դեպքում, ներառյալ՝ **Ավստրալիան**, **Չիլին** և **Մալթան**, դրանք եականորեն նվազել են:

2018թ. դասակարգման աղյուսակը՝ համապատասխանաբար 88 և 87 միավորներով:
Աղյուսակը եզրափակում են **Սոմալին**,

Հարավային Սուդանը և Սիրիան՝ համապատասխանաբար 10, 13 և 13 միավորներով: ԿԸՀ ամենաբարձր ցուցանիշն ունեցող տարածաշրջաններն են Արևմտյան Եվրոպան և Եվրոպական Միությունը՝ 66 ԿԸՀ միջին արժեքով, իսկ ամենացածր ունեցողներն են Անդրսահարյան Աֆրիկան (ԿԸՀ միջին արժեքը՝ 32) և Արևելյան Եվրոպան և Կենտրոնական Ասիան (ԿԸՀ միջին արժեքը՝ 35):

Կոռուպցիան և ժողովրդավարության ճգնաժամը

ԿԸՀ և ժողովրդավարության գլոբալ տվյալների խաչաձև վերլուծությունը բացահայտում է կոռուպցիայի և ժողովրդավարության վիճակի միջև կապը: Լիովին ժողովրդավար երկրների ԿԸՀ միջին արժեքը հավասար է 75-ի, ժողովրդավարության անբավարար մակարդակ ունեցող երկրների դեպքում այն հավասար է 49-ի, ավտորիտարիզմի տարրեր պարունակող հիբրիդ վարչակարգերի ԿԸՀ միջին արժեքը հավասար է 35-ի, իսկ առավել վատ է վիճակը ավտորիտար երկրների պարագայում՝ դրանց ԿԸՀ միջին արժեքը ընդամենը 30 է:

Այս միտումի օրինակ են **Հունգարիան և Թուրքիան**, որոնց ԿԸՀ արժեքները **վերջին հինգ տարիներին նվազել են, համապատասխանաբար, 8 և 9 միավորով**: Միևնույն ժամանակ, Թուրքիան ժողովրդավարության առումով նշված տարիների ընթացքում նահանջ ապրեց՝ «մասամբ ազատ» երկրից վերածվելով «ոչ ազատ»-ի: Իր հերթին, Հունգարիան 1989թ. կոմունիզմի անկումից հետո ընկած ժամանակաշրջանում գրանցեց քաղաքական ազատությունների գծով ամենացածր արժեքը: Այս տվյալներն արտացոլում են օրենքի գերակայության և ժողովրդավարական հաստատությունների խարխուլումը, ինչպես նաև այդ երկրներում քաղաքացիական հասարակության և անկախ լրատվամիջոցների համար գործունեության ոլորտների արագ տեմպերով կրճատումը:

Ընդհանուր առմամբ, կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրները կարող են հանդիսանալ վտանգավոր վայրեր քաղաքական ընդդիմության համար: Գործնականում, բոլոր այն երկրները, որտեղ իշխանությունների կողմից պատվիրվում են քաղաքական սպանություններ կամ դրանց թողություն է տրվում, ԿԸՀ դասակարգմամբ հանդիսանում են մեծապես կոռումպացված պետություններ:

Ուշադրության արժանի երկրներ

Իր ԿԸՅ 71 արժեքով, որն անցյալ տարվա համեմատությամբ չորս միավորով պակաս է, ԱՄՆ-ն 2011թ.-ից հետո առաջին անգամ դուրս մնաց աշխարհի 20 ամենից քիչ կոռուպացված երկրների խմբից: Այսպիսի ցածր արժեք ԱՄՆ-ն ստանում է այն ժամանակ, երբ վտանգված է զսպումների և հակակաշիռների նրա համակարգը, ինչպես նաև իշխանության ամենավերին մակարդակներում առկա է բարոյական նորմերի երոզիա:

Բրազիլիայի ԿԸՅ համաթվի արժեքն անցյալ տարվա համեմատ նվազեց երկու միավորով՝ հասնելով 35-ի, որը վերջին յոթը տարիների նրա ԿԸՅ ամենացածր արժեքն է: Կոռուպցիան վերջ տալու խոստումների հետ միաժամանակ երկրի նոր նախագահը նաև հասկացրեց, որ ինքն իշխելու է «ուժեղ ձեռքով», դրանով իսկ վտանգելով երկրի ժողովրդավարական նվաճումները:

«Մեր ուսումնասիրությունը պարզորեն ցույց է տալիս, որ առկա է կապ ամուր ժողովրդավարություն ունենալու և հանրային ոլորտում կոռուպցիայի դեմ հաջող պայքարելու միջև: Շատ ավելի հավանական է, որ կոռուպցիան կծաղկի այն երկրներում, որտեղ ժողովրդավարության հիմքերը թույլ են, և, ինչպես մենք տեսանք շատ երկրների դեպքում, ոչ ժողովրդավար և ամբոխավար քաղաքական գործիչներն այն օգտագործում են հօգուտ իրենց»,- նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի նախագահ տիկին Դելիա Ֆերեյրա Ռուբինո:

Կոռուպցիայի դեմ պայքարում իրական առաջընթաց արձանագրելու և ժողովրդավարությունն ամրապնդելու համար Թրանսփարենսի Ինթերնեշնլը աշխարհի բոլոր երկրների իշխանություններին կոչ է անում.

- Ամրապնդել այն հաստատությունները, որոնք պատասխանատու են զսպումների և հակաշիռների պահպանման համար և ապահովել նրանց այնպիսի կարողություններով, որոնք նրանց թույլ կտան գործել վախից զերծ մթնոլորտում:
- Փակել հակակոռուպցիոն օրենսդրության, դրա կիրարկման և չկիրարկելու համար պատժելիության միջև առկա բացերը:

• Աջակցել քաղաքացիական հասարակության այն կազմակերպություններին, որոնց գործունեությունն ուղղված է քաղաքական մասնակցության ընդլայնմանը և, մասնավորապես, տեղական մակարդակում, պետական ծախսերի նկատմամբ հանրային վերահսկողության ուժեղացմանը:

- Աջակցել ազատ և անկախ լրատվամիջոցներին և ապահովել լրագրողների անվտանգությունը և հնարավորությունը՝ աշխատելու սպառնալիքներից և ոտնձգություններից զերծ մթնոլորտում:

2018թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի և ժողովրդավարության համաշխարհային ճգնաժամի միջև խաչաձև վերլուծության համար օգտագործվել են «Էկոնոմիստ» թերթի **Ժողովրդավարության համաթիվը** (<http://www.eiu.com/topic/democracy-index>), Ֆրիդոմ Զաուսի **Ազատությունն աշխարհում** (<https://freedomhouse.org/report-types/freedom-world>) **վեկույցը** և ժողովրդավարության բավմասության ծրագրի **Ժողովրդավարության տարեկան վեկույցը** (<https://www.v-dem.net/en/news/democracy-all-v-dem-annual-democracy-report-2018/>):

Թրանսփարենսի Ինթերնեշնլի մասին

Թրանսփարենսի Ինթերնեշնլը վերջին 25 տարիներին կոռուպցիայի դեմ պայքարող քաղաքացիական հասարակության առաջատար համաշխարհային կազմակերպությունն է: Համատեղենք մեր ջանքերը www.transparency.org – ի միջոցով:

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի ամենանշանակալի հրապարակումը՝ Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: Համաթիվը տալիս է կոռուպցիայի հարաբերական աստիճանի տարեկան պատկերը՝ դասակարգելով պետություններն ըստ համաթվի արժեքների: 2012 թվականին Թրանսփարենսի Ինթերնեշնլը



վերանայեց համաթվի հաշվարկման համար
օգտագործվող մեթոդաբանությունը, որը հնարավորություն տվեց տարի առ տարի
համեմատելու համաթվի արժեքները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք
www.transparency.org/research/cpi